



Եվրոպայի խորհրդի պայմանագրեր - Թիվ 55

**Մարդու իրավունքների և հիմնարար
ազատությունների պաշտպանության կոնվենցիայի
Թիվ 5 արձանագրություն, որով փոփոխվում են
Կոնվենցիայի Հոդվածներ 22-ը և 40-ը**

Ոչ պաշտոնական թարգմանություն

Ստրասբուրգ, 20.1.1966թ.

Կոնվենցիայի սկզբնական տեքստը փոփոխվել է Թիվ 5 արձանագրության (ԵԽՊ Թիվ 55) համաձայն, որն ուժի մեջ է մտել 1970թ. դեկտեմբերի 21-ին: Սույն Արձանագրությամբ փոփոխված կամ լրացված բոլոր դրույթները փոխարինվել են Թիվ 11 արձանագրությամբ (ԵԽՊ Թիվ 155)՝ վերջինիս 1998թ. նոյեմբերի 1-ին ուժի մեջ մտնելուց հետո:

Եվրոպայի խորհրդի անդամ հանդիսացող ներքոստորագրյալ կողմերը,

Հաշվի առնելով, որ որոշ անհարմարություններ են առաջացել 1950թ. նոյեմբերի 4-ին Հռոմում ստորագրված Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա)՝ Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Դատարան) անդամների պաշտոնավարման ժամկետներին առնչվող Հոդվածներ 22-ի և 40-ի կիրառման շուրջ,

Հաշվի առնելով, որ հնարավորության դեպքում ցանկալի է յուրաքանչյուր երեք տարին մեկ Հանձնաժողովի անդամների կեսի և Դատարանի անդամների մեկ երրորդի ընտրությունների կազմակերպումը,

Հետևաբար հաշվի առնելով, որ Կոնվենցիայի որոշ դրույթների փոփոխությունը ցանկալի է,

Համաձայնել են հետևյալի շուրջ.

Հոդված 1

Կոնվենցիայի Հոդված 22-ի պարբերություն 2-ից հետո ներառվում են հետևյալ երկու պարբերությունները.

- «3 Յուրաքանչյուր երեք տարին մեկ Հանձնաժողովի կազմի, ըստ հնարավորին, կիսով չափ նորացումն ապահովելու նպատակով՝ Նախարարների կոմիտեն կարող է մինչև ցանկացած հաջորդ ընտրություններն անցկացնելը որոշում ընդունել, որ մեկ կամ մի քանի ընտրվող անդամների պաշտոնավարության ժամկետը կամ ժամկետները լինեն այլ, քան վեց տարին է, բայց ամեն դեպքում՝ ոչ ավելի, քան ինը և ոչ պակաս, քան երեք տարի:
- 4 Այն դեպքերում, երբ խոսքը վերաբերում է պաշտոնավարության մեկից ավելի ժամկետի, և Նախարարների կոմիտեն կիրառում է նախորդ կետի դրույթները, պաշտոնավարության ժամկետները որոշում է Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը՝ ընտրություններից անմիջապես հետո անցկացվող վիճակահանությանը:»

Հոդված 2

Կոնվենցիայի Հոդված 22-ի նախկին պարբերություններ 3-ը և 4-ը համապատասխանաբար դառնում են պարբերություններ 5 և 6:

Հոդված 3

Կոնվենցիայի Հոդված 40-ի պարբերություն 2-ից հետո ներառվում են հետևյալ երկու պարբերությունները.

- «3 Յուրաքանչյուր երեք տարին մեկ Դատարանի կազմի, ըստ հնարավորին, մեկ երրորդի նորացումն ապահովելու նպատակով՝ Խորհրդատվական վեհաժողովը կարող է մինչև ցանկացած հաջորդ ընտրություններն անցկացնելը որոշում ընդունել, որ մեկ կամ մի քանի ընտրվող անդամների պաշտոնավարության ժամկետը կամ ժամկետները լինեն այլ, քան ինը տարին է, բայց ամեն դեպքում՝ ոչ ավելի, քան տասներկու և ոչ պակաս, քան վեց տարի:

4 Այն դեպքերում, երբ խոսքը վերաբերում է պաշտոնավարության մեկից ավելի ժամկետների, և խորհրդատվական վեհաժողովը կիրառում է նախորդ կետի դրույթները, պաշտոնավարության ժամկետները որոշում է Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը՝ ընտրություններից անմիջապես հետո անցկացվող վիճակահանությամբ:»

Հոդված 4

Կոնվենցիայի Հոդված 40-ի նախկին պարբերություններ 3-ը և 4-ը համապատասխանաբար դառնում են պարբերություններ 5 և 6:

Հոդված 5

1 Սույն Արձանագրությունը բաց է Կոնվենցիան ստորագրած Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների համար, որոնք կարող են կողմ դառնալ այն.

ա. ստորագրելով՝ առանց վավերացմանը կամ ընդունմանը վերաբերող վերապահման, կամ

բ. ստորագրելով վավերացմանը կամ ընդունմանը վերաբերող վերապահումով, հետագայում վավերացնելով կամ ընդունելով:

Վավերացման կամ ընդունման փաստաթղթերն ի պահ են հանձնվում Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին:

2 Սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում Կոնվենցիայի բոլոր անդամ պետությունների՝ սույն հոդվածի պարբերություն 1-ի դրույթների համաձայն սույն Արձանագրության կողմ դառնալուց անմիջապես հետո:

3 Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին ծանուցում է.

ա. առանց վավերացմանը կամ ընդունմանը վերաբերող վերապահման յուրաքանչյուր ստորագրման մասին,

բ. վավերացմանը կամ ընդունմանը վերաբերող վերապահումով յուրաքանչյուր ստորագրման մասին,

գ. վավերացման կամ ընդունման յուրաքանչյուր փաստաթղթի ի պահ հանձնման մասին,

դ. սույն հոդվածի պարբերություն 2-ի համաձայն սույն Արձանագրության ուժի մեջ մտնելու մասին:

Ի հաստատումն վերը նշվածի՝ ներքոստորագրյալները, համապատասխան իրավասություններով օժտված, ստորագրել են սույն Արձանագրությունը:

Կատարված է Ստրասբուրգում, 1966 թվականի հունվարի 20-ին, անգլերեն և ֆրանսերեն լեզուներով, ընդ որում երկու տեքստերն էլ հավասարազոր են, մեկ բնօրինակով, պահպանվում են Եվրոպայի խորհրդի արխիվներում: Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը հաստատված պատճեններն ուղարկում է Եվրոպայի խորհրդի յուրաքանչյուր անդամ պետությանը: